ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«17» 05 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000033

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Հակոբ Հակոբյան***
Սևան համայնք 4-րդ փողոց, թիվ 3

Գործունեությունը՝ ***Սևանի թերակղզու տարածքի հանգստյան գոտում առևտրի և սպասարկման օբյեկտի վերակառուցման և վերահատակագծման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000033

'17' 05 2019թ.

Սևանի թերակղզու տարածքի հանգստյան գոտում առևտրի և սպասարկման օբյեկտի վերակառուցման և վերահատակագծման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի Հ. Հակոբյան
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք

Կառուցապատման իրավունքով, Հակոբ Հակոբյանին պատկանող՝ 1.14հա մակերեսով հանգստի գոտում, նախատեսվում է իրականացնել առևտրի և սպասարկման օբեկտի վերակառուցման և վերահատակագծման աշխատանքներ: Նախատեսվող հողամասը տեղակայված է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքում: Համաձայն նախագծի՝ նախատեսվում է դեպի թերակղզի տանող ճանապարհի եզրին գտնվող, դեռևս 80-ից 90-ական թվականներից կառուցված շինությունների ապամոնտաժում, որի տեղում կկառուցվի խոհանոցային մասնաշենք, ավտոկայանատեղի ու կստեղծվի կանաչ գոտի, որը կարող է ծառայել որպես սեզոնային բացօթյա սրճարան:

Կառուցապատվող տարածքը մոտակա պատմամշակութային հուշարձաններից /թերակղզում գտնվող Ս. Նշան եկեղեցի/ հեռու է մոտ 900.0մ, իսկ հարևանությամբ գտնվող մոտակա շինությունից՝ 100.0մ /խանութ տաղավար, որը գործում է միայն ամռան սեզոնին/:

Ռելիեֆը իրենից ներկայացնում է համեմատաբար հարթ տարածք, մակերեսի թեքությունը հարավ, դեպի թերակղզի մտնող ճանապարհ: Տարածքի բացարձակ նիշերը սահմանվում են 1908.50-1909.90 մետրի սահմաններում:

Առաջին փուլում նախատեսվում է տարածքում գոյություն ունեցող կառույցների ապամոնտաժում, այդ թվում.

- մեկ հատ 26.9x11.2մ չափերի քարե և կիսով չափ հավաքովի կոնստրուկցիաներով ճաշարան,

- մեկ հատ 16.1x5.5մ չափերի քարե մեկ հարկանի ճաշատեղիներ,
- մեկ հատ 2.4x2.1մ չափերի քարե մեկ հարկանի սպասարկման կետ:

Հանգստի գոտում նախատեսվող նոր շինության կառուցապատումն իրականացվելու է 1905.0մ բացարձակ նիշից բարձր և համաձայն նախագծի նախատեսված է.

1. քարե՝ մետաղական հիմնակմախքով, խոհանոցային մասնաշենք - 360.0մ² մակերեսով,
2. ապամոնտաժված՝ 420.0մ² մակերեսով, տարածքի բարեկարգում (ավտոկայանատեղի կազմակերպում և դեկորատիվ թփերով կանաչապատում, որը կարող է ծառայել որպես սեզոնային բացօթյա սրճարան):

Վերակառուցումից և վերահատակագծումից հետո 1.14հա հողատարածքում կառուցապատման մակերեսը կկազմի 2333.0մ², իսկ անջրանցիկ տարածքի մակերեսը՝ 4364.0մ²:

Նախատեսվող խոհանոցային մասնաշենքը մեկ հարկանի է՝ 12.0x24.0մ. առանցքային չափերով, խառը հատակագծային լուծումներով: Այն կկառուցվի առկա շինություններից հյուսիս-արևմուտք տեղադիրքով, ներդաշնակ է տեղանքին, համահունչ է շրջակայքում գոյություն ունեցող շինությունների նյութերին: Շինության հիմքերը ժապավենային են, պատերը՝ քարից, ծածկը՝ կղմինդրաձև մետաղական:

Շինության ներսում ջեռուցումն ու հովացումը կիրականացվի գործարանային արտադրության էլեկտրական սարքավորումների միջոցով: Կառուցապատվող տարածքը ապահովված է բոլոր տեսակի ինժեներական ենթակառուցվածքներով: Նոր կամ լրացուցիչ ինժեներական ենթակառուցվածքների անհրաժեշտություն չկա: Համաձայն ներկայացված նախագծային լուծումների՝ ջրամատակարարման ներքին ցանցը կմիացվի տարածքում առկա ջրագծին:

Հանգստի գոտու ջրամատակարարումը իրականացվում է տարածքում գոյություն ունեցող ջրագծով:

Կոմունալ-կենցաղային կարիքներ համար անհրաժեշտ ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմերը որոշվում են կենցաղային-տնտեսական կարիքների համար օգտագործվող ջրի քանակով: Ըստ հաշվարկների հանգստացողների խմելու և կենցաղային նպատակների համար ջրածախսը կազմելու է 3150.0մ³/տարի կամ 21.0մ³/օր, իսկ կեղտաջրերի քանակը՝ համապատասխանաբար 3102.75մ³/տարի կամ 20,68մ³/օր: Հանգստյան գոտու կեղտաջրերի հեռացման և հոսքաջրերի մաքրման համար ընտրվելու է նոր կենսաբանական մաքրման կայան, որը կապահովի Սևանա լճի համար հաստատված նորմերը: Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը միացված է կեղտաջրերի մաքրման կայանին: Նախնական գնահատման հայտով նախատեսվում է ձեռք բերել մակերևույթային ջրերի աղտոտումից պահպանելու սանիտարական նորմերով և կանոններով / (ГОСТ 25298-82) և ՇՆ և Կ-40-03-99 ու ՇՆ և Կ 2.04.03-85 <<Ջրահեռացում արտաքին ցանցեր և կառույցներ>>/ մաքրման աստիճան ապահովող <<ЗОНРАСЛОГО>>, <<ЛОГА>> կամ տեղական արտադրության՝ <<ХИММАСТЕР>> կազմակերպության (տարբեր ծավալների և հզորության) մոդուլային կենսաբանական մաքրման կայաններից մեկը: Նոր կառացապատվող տարածքներում ծառահատումներ չեն լինելու: Նախատեսված կանաչ գոտիներում կանաչապատումը կիրականացվի ծառերով, թփերով և բույսերով, որոնց

տեսականին կհամաձայնեցվի <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի հետ: Նախատեսվում է տնկել շուրջ 50 հատ արծաթափայլ եղևնի: Ոռոգումը կիրականացվի կաթիլային եղանակով, որի համար կտեղադրվի ջրի տարողություն: Տարածքը կբարեկարգվի և կանցկացվի գիշերային լուսավորություն: Կառուցապատվող տարածքներում հողի բերի շետերը բացակայում է, իսկ հանվող և հետլիցքի հողային աշխատանքները իրականացվելու են ձեռքով՝ առանց ծանր տեխնիկայի կիրառման:

Աշխատանքների իրականացման ժամանակ նախատեսվում է հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական աշխատանքների ընթացքում փոշու արտանետումները նվազեցնելու համար ջրցանի իրականացում,
- փոշու տարածումը կանխարգելելու համար համապատասխան բարձրությամբ թաղանթով սորուն նյութերի պահեստների ծածկում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգաբերում,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- կեղտաջրերի հավաքման համար կոյուղաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախատեսում,
- ցերեկային ժամերին շինարարական աշխատանքներ և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում,
- շինարարական աղբի տեղափոխումն աղբավայր իրականացվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով,
- մի քանի տեխնիկական և տրանսպորտային միջոցների միաժամանակյա շահագործումը բացառվելու է,
- բետոնի խառնուրդը բերվելու է բետոնահանգույցից, բացառելով տեղում պատրաստելը:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության, 08.04.2019թ. Սևանի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների, ինչպես նաև փորձաքննական գործընթացում կատարված լրամշակումների, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից, <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ից և 22.03.2019թ. մշակույթի նախարարությունից ստացված կարծիքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն աննշան, կարճատև և տեղային: Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ հայտի՝ լուծված են կեղտաջրերի հավաքման և հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի բարեկարգման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն

ուղղված բավարար միջոցառումներ: Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, խախտվող տարածքի փոքր մակերեսը, մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի հոդված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Փորձաքննական պահանջներ

1. Շինաշխատանքների համար պահանջվող նյութերը պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 24.01.2002թ. <<Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը>> հաստատող N 57-Ն որոշման պահանջներին:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել սահմանված ժամին՝ հանգստյան գոտու տարածքներում աղմուկի և ճանապարհային բեռնվածությունից խուսափելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի Հակոբ Հակոբյանի կողմից ներկայացված Սևանի թերակղզու տարածքի հանգստյան գոտում առևտրի և սպասարկման օբյեկտի վերակառուցման և վերահատակագծման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Կ. Մովսիսյան